

**ՖԻՆԱՆՍԻԱՅԻ ԵՎ ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԵՍԱՏԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Ֆինանսական ճգնաժամը վերջին տարիներին պայմանավորված է համաշխարհային տնտեսությունում անհամասնությամբ, ինստիտուցիոնալ ոլորտում թերություններով, մրցակցության ուժեղացմամբ և երկրների փոխադարձ կապվածությամբ՝ գլոբալացման գործընթացների հետևանքների արագացմամբ:

Ճգնաժամի առավել կտրուկ փուլն արդեն իրականացվել է. առաջատար համաշխարհային տնտեսություններում նշմարվել են աճի միտումներ: Կենտրոնական բանկերի և կառավարությունների միջոցառումների շնորհիվ դադարեցվել է տնտեսական ակտիվության կտրուկ անկումը: Չնայած ճգնաժամի սկզբնաղբյուրը գտնվում էր ֆինանսական հատվածում՝ կարգավորող մարմինները ստիպված էին փրկել ոչ միայն ֆինանսական համակարգը, այլ նաև համաշխարհային տնտեսությունը ամբողջությամբ: Անհրաժեշտ է ընդունել, որ ընդունված որոշումները բավականին արդյունավետ էին:

Տնտեսական ճգնաժամն անցած տարի լուրջ ազդեցություն ունեցավ Հայաստանի թե՛ տնտեսական, թե՛ հարկային եկամուտների վրա: Դրանք շոշափելի կրճատվեցին, ընդ որում, ավելի շատ հարկերը, քան տնտեսությունը: Այդ տարի վիճակը փոխվել է: Առաջին եռամսյակի ընթացքում տնտեսական աճը Հայաստանում եղավ 5.5%: Սակայն շատ ավելի մեծ է հարկային եկամուտների ավելացումը (նախորդ տարվա համեմատ՝ 19%)¹:

Արտերկրյա փորձում տնտեսության հարկային կարգավորումը իրականացվում է նոր հարկերի սահմանման միջոցով կամ գործող օրենսդրության շտկման միջոցով:

Յուրաքանչյուր երկրում ձևավորված հարկային համակարգը պետք է ուղղված լինի տվյալ երկրի իշխանությունների կողմից որոշակի ժամանակահատվածում իրականացվող տնտեսական և սոցիալական քաղաքականության հիմնախնդիրների լուծմանը, այդ համակարգում կիրառվող հարկման եղանակներն ու մեթոդները պետք է առավելագույնս հաշվի առնեն տվյալ պետությունում տնտեսական հարաբերությունների մակարդակն ու զարգացման հիմնական գերակայությունները, ինչպես նաև կառուցված լինեն օպտիմալ հարկային համակարգին հատուկ սկզբունքների ու ներկայացվող պահանջների հաշվառման վրա:

Այդ ամենի հետ կապված հետաքրքիր է մի շարք երկրների փորձը՝ կապված տնտեսության զարգացման խթանման, ներդրումների ներգրավման, սոցիալական զարգացման հետ:

Ֆրանսիայի հարկային համակարգը հետաքրքիր է նրանով, որ հենց այդ երկրում է մշակվել և առաջին անգամ ներմուծվել 1954 թվականին ԱԱՀ-ն: Ներկայումս համակարգը առանձնանում է իր կայունությամբ զանձվող հարկերի ու դրանց օգտագործման ուղղությունների առումով: Հարկերի դրույքաչափերը տարեկան վերանայվում են՝ հաշվի առնելով տնտեսական իրավիճակը և պետության սոցիալ-տնտեսական քաղաքականության ուղղվածությունը:

Ֆրանսիայի հարկային համակարգին բնորոշ հիմնական գծերից կարելի է նշել սոցիալական ուղղվածությունը, անուղղակի հարկերի մեծ տեսակարար կշիռը, եկամտահարկի

¹ <http://www.armtown.com/news/am/has/20100428/3847119293/>.

յուրահատուկ դերը, ճկուն և միևնույն ժամանակ խիստ համակարգը, արտոնությունների և գեղչերի լայն համակարգը, բաց լինելը միջազգային հարկային համաձայնագրերի համար:

Ֆրանսիայում հարկերը ձևավորում են պետական բյուջեի շուրջ 90%-ը: Հարկազան-
ձումն իրականացվում է հարկային ծառայություն միջոցով: Հարկերի հիմնական տեսակներն
են անուղղակի, ուղղակի և դրոշմային հարկերը: Ինչպես ՀՀ-ում, այնպես էլ Ֆրանսիայում
գերակշռում են անուղղակի հարկերը, ընդ որում դրանց 50%-ը կազմում է ԱԱՀ-ը¹: Ֆրան-
սիայում գոյություն ունի խիստ տարանջատում տեղական հարկերի և այն հարկերի միջև,
որոնք մտնում են կենտրոնական բյուջե: Հիմնական դաշնային հարկերն են՝ ԱԱՀ-ն, ֆիզի-
կական անձանցից գանձվող եկամտահարկը, իրավաբանական անձանցից շահութահարկը,
նավթամթերքի մաքսատուրքերը, ակցիզային հարկը (բացի ակցիզային հարկով հարկման
ենթակա հիմնական ապրանքներից նաև լուցկին, հանքային ջուրը, ավիատրանսպորտային
ծառայությունները), սեփականության հարկը, մաքսային վճարները:

Հիմնական տեղական հարկերն են՝ զբոսաշրջության հարկ, ընտանիքի հարկեր (երեք
տեսակի հարկեր՝ բնակարանի, գույքահարկ, հողի հարկ), մասնագիտության հարկ, տարածքի
մաքրման հարկ, հաղորդակցման հարկ, շինության վաճառքից հարկ: Ընդհանուր առմամբ,
տեղական հարկերը կազմում են ողջ հարկային բեռի 30%-ը և համալրում տեղական բյու-
ջեների 40%-ը:

2010 թվականի հունվարի 22-ին հարկային մարմինները հրապարակել են ոչ ռեզիդենտ-
ների բաժնեմասերի հարկման վերաբերյալ ձեռնարկ: Փոփոխությունների նպատակը
մասնագիտությունների սահմանափակումն է՝ բժիշկներ, իրավաբաններ, խորհրդատուներ,
դասակարգելով՝ նրանց վաստակածը շահութահարկ՝ մասնագիտական եկամտի փոխարեն²:

Երկրում կազմակերպությունների հարկազանձումն իրականացնում է հարկային ծառա-
յությունը, որը գործում է ֆինանսների նախարարության կազմում: Այն գլխավորում է Գլխա-
վոր հարկային վարչությունը, որտեղ աշխատում է 80000 ծառայող: Նրանք կենտրոնացած
են հարկային կենտրոններում (թվով 830) ու 16 տեղեկատվական կենտրոններում³: Հարկա-
յին կենտրոնները հաշվարկում են հարկման բազան յուրաքանչյուր հարկի գծով, հավաքում
են վճարները, հսկում վճարումների ճիշտ կատարման գործընթացը: Հարկազանձումը
հիմնվում է եկամուտների հայտարարագրի և դրա ճիշտ կազման ստուգման վրա: Գոյություն
ունի երկու տեսակի ստուգում՝

- ըստ փաստաթղթերի տվյալների,
- ըստ հարկային տեսուչի մոտ եղած փաստաթղթերի, եթե հայտարարագրերում կան անհամապատասխանություններ:

Հարկային եկամուտները թաքցնելու դեպքում սահմանվում է պատասխանատվության
խիստ համակարգ, մասնավորապես՝

- հարկի լրացման սխալի դեպքում հարկը գանձվում է ամբողջ չափով և սահմանվում է
տույժ 0.75% ամսական կամ 9% տարեկան,
- եթե սխալը կանխատեսված է, ապա հարկը գանձվում է կրկնակի չափով,
- յուրջ խախտման դեպքում հնարավոր է ազատագրվում:

Ֆրանսիայում գոյություն ունի ԱԱՀ-ի 4 դրույքաչափ.

1. 18.6%՝ բոլոր տեսակի ապրանքների ու ծառայությունների նորմալ դրույքաչափ,

¹ www.rusdolg.ru/document/nc%20francii.doc.

² <http://www.taxservice.am/uploads/pdf/texekanq%2016%2002%2010%20N3.pdf>.

³ www.rusdolg.ru/document/nc%20francii.doc.

2. 33.33%՝ պերճանքի առարկաների, մեքենաների, ակոհոլային խմիչքների, ծխախոտի սահմանային դրույքաչափ,
3. 7%՝ մշակութային առօրյա իրերի (օրինակ՝ գրքերի) նվազեցման դրույքաչափ,
4. 5.5%՝ առաջին անհրաժեշտության ապրանքների ու ծառայությունների (այդ թվում՝ սնունդ, բացի ակոհոլային խմիչքներից ու շոկոլադից):

Ներկայումս նկատվում է դրույքաչափերի նվազեցման միտում և անցում երկու դրույքաչափերի՝ 18.6% և 5.5%:

Ընդհանուր առմամբ, Ֆրանսիայում ԱԱՀ-ն իրենից ներկայացնում է առավել ճկուն կառուցվածք, քան ՀՀ-ինը: Դա արտահայտվում է զեղչերի ու արտոնությունների լայն համակարգով: Ֆրանսիայում ԱԱՀ-ի կարևոր յուրահատկությունն է՝ դրա նվազեցումը ներդրումների մոտավոր գումարի չափով: Այստեղ ԱԱՀ-ն իր ողջ ճկունությամբ ապահովում է բոլոր հարկային մուտքերի 45%-ը, ինչը խոսում է դրա արդյունավետության մասին:

Ֆրանսիայում եկամտահարկի վրա դրված են բնակչության կողմից խնայողությունների կատարման, անշարժ գույքի, բաժնետոմսերի ձեռքբերման խթաններ ստեղծելու ֆունկցիան: Դա ստեղծում է հարկի հաշվարկման և բազմաթիվ արտոնությունների կիրառման բարդ համակարգ: Այսպես, 25 մլն հարկատուներից փաստացի հարկ վճարում է միայն 15 մլն-ը (52%-ը)¹: Պոտենցիալ հարկատուներ են հանդիսանում երկրի բոլոր ֆիզիկական անձինք, ինչպես նաև այն կազմակերպություններն ու կոոպերատիվները, որոնք չեն հանդիսանում բաժնետիրական ընկերություն: Ըստ էության, հարկը հաշվարկվում է միասնական պրոգրեսիվ սանդղակով, բայց միաժամանակ այն հաշվի է առնում յուրաքանչյուր հարկատուի տնտեսական, սոցիալական, ընտանեկան վիճակը և տարիքը: Հարկի դրույքաչափեր են՝ 0-56.8%-ը՝ կախված եկամուտների մակարդակից: Եկամտահարկի սկզբունքային առանձնահատկությունն այն է, որ դրա հիմքում ընկած է ոչ թե ֆիզիկական անձի, այլ ընտանիքի եկամուտը: Եթե հարկատուն ամուսնացած չէ, ապա հարկազանձման սկզբունքների համաձայն նա համարվում է մեկ անձից բաղկացած ընտանիք, ընդ որում՝ հարկը վճարվում է՝ սկսած 18 տարեկանից: Հարկազանձումն իրականացվում է հարկատուի կողմից տարին մեկ անգամ իր նախորդ տարվա եկամուտների հիման վրա լրացված հայտարարագրի համախառն եկամտի հիման վրա:

Բաժնետիրական ընկերությունների շահութահարկի տեսակարար կշիռը ընդհանուր հարկային մուտքերի մեջ կազմում է 10% և ունի նվազման միտում: Դա կապված է դրույքաչափերի մշտական նվազեցումների հետ: Տվյալ հարկը կիրառվում է միայն բաժնետիրական ընկերությունների նկատմամբ, այսինքն՝ իրավաբանական անձինք, որոնք չեն հանդիսանում բաժնետիրական ընկերություն, հարկվում են այնպես, ինչպես ֆիզիկական անձինք՝ վճարելով եկամտահարկ:

Հարկման օբյեկտ է համարվում գործունեության բոլոր տեսակներից ստացվող զուտ եկամուտը: Հարկի դրույքաչափը կազմում է հարկվող շահույթի 39%-ը, իսկ եթե այդ շահույթը վճարվում է որպես շահաբաժիններ, ապա շահութահարկի դրույքաչափը կազմում է 42%:

Նոր ստեղծված բաժնետիրական ընկերությունների համար կան որոշակի արտոնություններ՝ 5 տարվա ընթացքում և գործողության տևողությունից կախված՝ զեղչերը տարբեր են².

- մինչև 2 տարի՝ 100%,
- 3 տարի՝ 75%,

¹ bibliofond.ru/view.aspx?id=92645 - 55k.

² <http://revolution.allbest.ru/finance/d00194672.html>.

- 4 տարի՝ 50%,
- 5 տարի՝ 25%,
- 6 տարի և ավել՝ 0%:

Վնասով աշխատող կազմակերպությունները հարկ վճարում են՝ ելնելով իրենց ապրանքաշրջանառության ծավալից.

- մինչև 1 մլն ֆրանկ շրջանառության դեպքում՝ 4000 ֆրանկ,
- 1-2 մլն ֆրանկ շրջանառության դեպքում՝ 6000 ֆրանկ,
- 2-5 մլն ֆրանկ շրջանառության դեպքում՝ 8500 ֆրանկ,
- 5-10 մլն ֆրանկ շրջանառության դեպքում՝ 11500 ֆրանկ,
- 10 մլն-ից ավել շրջանառության դեպքում՝ 17000 ֆրանկ:

Ֆրանսիական հարկերը փոխկապակցված են ամբողջ հարկային համակարգում, որում կիրառվում է կրկնակի հարկման բացառման մեխանիզմը: Տեղական մարմինները բավականին շատ իրավունքներ ունեն այս ոլորտում, բայց սահմանափակված են մի շարք պայմաններով:

Ֆրանսիան կրկնակի հարկումից խուսափելու վերաբերյալ համաձայնագրեր ունի հետևյալ երկրների հետ՝ Ավստրալիա, Բելգիա, Բրազիլիա, Կանադա, Դանիա, Ֆինլանդիա, Գերմանիա, Հնդկաստան, Իտալիա, Ճապոնիա, Լյուքսեմբուրգ, Մալթա, Նիդեռլանդներ, Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Ռուսաստան և այլն¹:

Եվրամիության հանձնաժողովը հավանություն է տվել Ֆրանսիայի հանրային հեռուստատեսության համար նախատեսված երկարաժամկետ ֆինանսավորման ծրագրին՝ ներդնելով երկու նոր հարկատեսակներ՝ մեկը գովազդի նկատմամբ, մյուսը՝ էլեկտրոնային կապի նկատմամբ՝ աստիճանաբար սահմանափակելով հանրային հեռուստատեսության ալիքներով գովազդի ցուցադրումը: Նախատեսվում է, որ գովազդի հարկը պետք է վճարվի հեռուստաալիքների կողմից, իսկ էլեկտրոնային կապի հարկը պետք է վճարվի այդ ծառայությունները մատուցողների կողմից: Այդ հարկերից ստացված եկամուտները կուղղվեն պետական ֆոնդեր:

Ֆրանսիայի կառավարության մարմինները մանրակրկիտ ուսումնասիրել են հանրային հեռահաղորդակցման համակարգը և 2009թ. մարտի 5-ի ընդունված օրենքով ներդրել են նոր հանրային հեռուստահեռարձակման ծառայություն, համաձայն որի հանրային հեռուստաալիքներից պետք է կրճատվի գովազդը և 2011թ. վերջին վերջնականապես չեղյալ համարվի²:

Ֆրանսիայի տնտեսական համակարգը տնտեսական ճգնաժամի ժամանակահատվածում դրսևորում է հարաբերական կայունություն՝ պայմանավորված տնտեսական կյանքում պետության զգալի դերակատարմամբ, այսինքն, եթե տնտեսության «խաղաղ» պայմաններում պետական միջամտությունն իրենից ներկայացնում է տնտեսական աճը դանդաղեցնող գործոն, ապա ցնցումային իրավիճակներում այն դրսևորվում է հակառակ արդյունքը:

2009թ. փետրվարին հարկային եկամուտները 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ ընկան 21%-ով, հունվարին արդյունաբերական արտադրանքի անկումը կազմեց մոտավորապես 5%: Այս թվերը խորհելու տեղիք են տալիս, սակայն այլ երկրների հետ համեմատության մեջ նույնիսկ կարելի է ասել, որ Ֆրանսիան շահել է³:

Նշենք, որ ՀՀ հարկային համակարգը ամբողջությամբ «հետևում» է Ֆրանսիայի հարկային համակարգին, սակայն ՀՀ և Ֆրանսիայի հարկային համակարգերի միջև տարբերու-

¹ http://www.taxservice.am/uploads/pdf/Francais_Arm.pdf.

² http://www.taxservice.am/uploads/pdf/July_News_July.pdf.

³ <http://www.armedia.am/?action=Analytical&what=show&id=1105500961&lang=arm>.

քյունը կայանում է հարկային մուտքերի չափերի, դրանց հավաքագրման գործընթացի և հետևաբար հարկեր/ՀՆԱ հարաբերության մեջ:

Աղյուսակ 1

Ֆրանսիայի և Հայաստանի հարկային դաշտի համեմատական վերլուծություն

	Ֆրանսիա	Հայաստան
Եկամտահարկ		
հարկ վճարողները	Ֆիզիկական անձինք, ինչպես նաև այն կազմակերպություններն ու կոոպերատիվները, որոնք չեն հանդիսանում բաժնետիրական ընկերություն	ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք
հարկվող օբյեկտը	Ֆրանսիայի համար՝ երկրի տարածքում և նրա սահմաններից դուրս ստացած եկամուտը, ոչ ռեզիդենտների համար՝ Ֆրանսիայի տարածքում ստացած եկամուտը	ՀՀ ռեզիդենտի համար՝ ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացած եկամուտը, ոչ ռեզիդենտների համար՝ ՀՀ տարածքում ստացած եկամուտը
հարկվող եկամուտը	հիմքում ընկած է ոչ թե ֆիզիկական անձի, այլ ընտանիքի եկամուտը	հարկատուի համախառն եկամտի և օրենքով նախատեսված նվազեցումների դրական տարբերությունն է
դրույքաչափերը	0-56.8%՝ կապված եկամուտների մակարդակից	մինչև 80000դր.՝ 10%, 80000-ից ավելի՝ 8000+80000 դրամը գերազանցող մասի 20%-ը
նվազագույն շեմ, նվազեցումներ		Հարկվող եկամուտը որոշելիս հարկ վճարողի համախառն եկամտից նվազեցվում են՝ զինծառայողների և դրանց հավասարեցված անձանց զինվորական ծառայության հետ կապված եկամուտները, փրկարարական ծառայողների ծառայության հետ կապված եկամուտները, ժառանգության և նվիրատվության կարգով ֆիզիկական անձանցից ստացված գույքը և դրամական միջոցները, ոչ առևտրային կազմակերպությունների միջոցներից կանոնադրական գործունեության շրջանակներում ֆիզիկական անձանց դրամական և բնամթերային ձևով ցույց տրվող օգնության գումարները, ընտանիքի որևէ անդամի մահվան դեպքում միանվագ կարգով վճարվող օգնության գումարները և այլն:
արտոնություններ	Ֆրանսիայում եկամտահարկի վրա դրված են բնակչության կողմից խնայողությունների կատարման, անշարժ գույքի, բաժնետոմսերի ձեռքբերման խթաններ ստեղծելու գործառնություններ: Դա ստեղծում է հարկի հաշվարկների և բազմաթիվ արտոնությունների կիրառման բարդ համակարգ:	
Շահութահարկ		
հարկ վճարողները	բաժնետիրական ընկերություններ	ՀՀ ռեզիդենտներն ու ոչ ռեզիդենտները, բացառությամբ ՀՀ պետական կառավարչական հիմնարկների, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների, բյուջետային հատկացումների և ամբողջությամբ բյուջե տեղափոխվող եկամուտների մասով և ՀՀ ԿԲ-ի:

	Ֆրանսիա	Հայաստան
հարկման օբյեկտը	գործունեության բոլոր տեսակներից ստացված զուտ եկամուտները	Ռեզիդենտների համար՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը, ոչ ռեզիդենտների համար՝ ՀՀ տարածքում ստացած շահույթը
դրույքաչափերը	հարկվող շահույթի 39%, իսկ եթե այդ շահույթը ոչ թե վերաներդրվում է, այլ վճարվում է որպես շահաբաժիններ, ապա շահութահարկի դրույքաչափը կազմում է 42%	Շահութահարկի գումարը հաշվարկվում է 20% դրույքաչափով հարկվող շահույթի նկատմամբ
Ավելացված արժեքի հարկ		
հարկ վճարողները	Ձեռնարկություններն ու անհատ ձեռնարկատերերը (իրավաբանական անձինք)	Ապրանքների մատակարարում՝ դրանց սեփականության իրավունքը փոխանցելով մեկ այլ անձի, ծառայությունների մատուցում, անհատույց սպառում, ներմուծում իրականացնող իրավաբանական անձինք
հարկման օբյեկտը	իրացվող ապրանքներն ու ծառայությունները, ինչպես նաև ներմուծվող ապրանքները	Ապրանքների մատակարարում՝ դրանց սեփականության իրավունքը փոխանցելով մեկ այլ անձի, ծառայությունների մատուցում, անհատույց սպառում, ներմուծում և օրենքով նախատեսված այլ գործարքների ամբողջ արժեքը
դրույքաչափերը	-18.6%՝ բոլոր տեսակի ապրանքների ու ծառայությունների նորմալ դրույքաչափ, -33.33%՝ պերճանքի առարկաների, մեքենաների, ակոհոլային խմիչքների, ծխախոտի սահմանային դրույքաչափ, -7%՝ մշակութային առօրյա իրերի (օրինակ՝ գրքերի) նվազեցման դրույքաչափ, -5.5%՝ առաջին անհրաժեշտության ապրանքների ու ծառայությունների (այդ թվում՝ սնունդ, բացի ակոհոլային խմիչքներից ու շոկոլադից):	ԱԱՀ սահմանվում է 20%՝ ապրանքների ու ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ
արտոնություններ	ներդրումներ իրականացնող կազմակերպություններ: ԱԱՀ վճարումից ազատվում է գործունեության 3 տեսակ՝ բժշկություն և բուժ սպասարկում, կրթություն, հասարակական և բարեգործական բնույթի գործունեություն: ԱԱՀ-ից ազատվում են նաև ապահովագրության տեսակները, վիճակախաղերը, խաղատները:	Հանրակրթական դպրոցները, գիտահետազոտական աշխատանքները, թերթերի ամսագրերի իրացումը, նվազագույն շեմը 58.36 մլն դրամը